



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
«ԱՐԵՎԻԿԱ» ԳՐԱԴԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ



Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«20» 03 2018թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 19

**Ձեռնարկողը՝**

**«ՍԱՍ ԴԱՎԻԹ» ՍՊԸ**

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրիի խճ. 3 փակ., 132

**Գործունեությունը՝**

**Ազգային անդեզիպների երևակման տարածքում  
երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների  
շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական  
գնահատման հայտ**

«Շիրակի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿի  
տնօրեն՝



Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

թիվ ԲՓ 19

«20» 03 2018թ.

**«Շիրակի մարզի Ագատի անդեզիտների երևակման տարածքում օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայր»**

Ձեռնարկող՝	«ՍԱՍ ԴԱՎԻԹ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝ փաստաթղթեր	Նախնական գնահատման հայտ, կից
Գործունեության կատեգորիա՝	<Գ> կատեգորիա
Տեղադրման վայրը՝	«Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, Կառնուտ բն.

«Շիրակի մարզի Ագատի անդեզիտների երևակման տարածքում նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ:

Ագատի անդեզիտների երևակումը վարչական տեսակետից գտնվում է «Շիրակի մարզի Կառնուտ գյուղից 1.3կմ դեպի հարավ, Ախուրյան քաղաքից 5կմ հյուսիս-արևելք և Գյումրի քաղաքից 10կմ դեպի հյուսիս-արևելք հեռավորության վրա, որի հետ կապված է ասֆալտապատ ճանապարհով: Տեղամասը ասֆալտապատ ավտոճանապարհով կապված է Կառնուտ, Ախուրյան, Հովիտ, Մուսաբեյան, Կամո բնակավայրերի և Հայկական երկաթգծի Գյումրի կայարանի հետ: Ագատի անդեզիտների երևակման տարածքը ներառված է Շիրակի գոգավորության մատույցներում, Ախուրյան գետի ձախ ափին:

Երևակման տարածքը գտնվում է կլիմայական ցուրտ գոտում, որտեղ հունվարի միջին ջերմաստիճանը տատանվում է -5°C մինչև -12°C, հուլիսին միջին ամսական ջերմաստիճանը՝ 16 °C է և ցածր: Շրջանի կլիման ցուրտ լեռնային է՝ երկարատև ձմեռով և կարճատև ամառով: Տեղումների միջին քանակը տարեկան կազմում է 550-650մմ:

Տարածքի խոշորագույն ջրային երակը Ախուրյան գետն է, որը սկիզբ է առնում Աշոցքի սարահարթի Արփի լճից: Մանթաշ գետի խոշորագույն վտակ Ջաջուռը հոսում է Ագատի անդեզիտների երևակման տարածքից 1.6կմ հեռավորության վրա, գետի սնումը ձնա-անձրևային է (63%), ռեժիմը՝ անկանոն, սելավային: Ջրերն օգտագործվում են ոռոգման նպատակով:

Անդեզիտների երևակման տարածքում տարածված են սևահողերը և գետահովտադարավանդային հողերը:

Երևակման շրջանի լեռնատափաստանային լանդշաֆտային գոտու կենդանական աշխարհը բնութագրվում է համեմատաբար աղքատիկ և միատեսակ անողնաշարավոր կենդանիներով: Ներառված լինելով Շիրակի ֆլորիստիկ շրջանում տարածքի բուսականության հիմնական տիպը տափաստանային է, մասամբ մարգագետնատափաստանային և մարգագետնային: Երևակման տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում:



Բուն երևակման տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր Գրքերում գրանցված տեսակներ չեն արձանագրվել իսկ շրջանում հայտնի տեսակները գտնվում են երևակման տարածքից բավականաչափ հեռու և հաշվի առնելով վերջիններիս հեռավորությունները, կարելի է փաստել, որ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները որևիցե բացասական ազդեցություն ՀՀ բույսերի Կարմիր գրքերում գրանցված տեսակների աճելավայրերի տարածքների վրա ունենալ չեն կարող:

Ազատի անդեզիտների երևակման տարածքը ներառված է Ախուրյան խոշորացված համայնքի Կառնուտ բնակավայրի վարչական սահմաններում: Երկրաբանական ուսումնասիրությունների աշխատանքների համար հայցվող տարածքը գյուղամերձ արոտավայրեր է:

Կառնուտ բնակավայրի տարածքում նշված են պատմության և մշակույթի հուշարձաններ: Երևակման տեղամասին ամենամոտ գտնվող հուշարձանի հեռավորությունը կազմում է 1.2կմ, հետևաբար երկրաբանական ուսումնասիրությունը չի կարող բացասաբար անդրադառնալ պատմամշակութային հուշարձանի իրավիճակի վրա:

Ազատի Անդեզիտների երևակումում երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքում օգտակար հանածոն ակնկալվում է որպես շինարարական ավազի (ГОСТ 8736-2014 Песок для строительных работ) և խճի (СUS ԳՈՍՏ 8267-95 << Խժ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար>>) արտադրության հումք գնահատելու, պաշարների հաշվարկման և հանքավայրի հետագա շահագործման համար: Նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- Երևակման տարածքի 1:1000 մասշտաբի տոպոգրաֆիակն հանույթ և երկրաբանական քարտեզի կազմում:
- Երևակման հետազոտում հորատանցքերով և մերկացումներով:
- Ապարների որակական և ճառագայթափոխանակ հատկությունների ուսումնասիրում:
- Փորձնական բացահանքի անցում և փորձնական հանույթ թարմ ապարներից:
- ՏՏՀ-ի կազմում:
- Պաշարների հաշվարկում արդյունաբերական կարգով:

Նախագծով նախատեսվում է 1:1000 մասշտաբի երկրաբանահանույթային աշխատանքներ, հորատանցքերի մեխանիկական սյունակային հորատում, նմուշարկում, փորձնական հանույթ, ռադիոմետրիական և ինժինեռա-հիդրոերկրաբանական ուսումնասիրություններ: Երկրաբանահանույթային աշխատանքները կատարվելու են 3,11 հա տարածքի վրա: Հորատումը կկատարվի կարծր համածուլվածքային թափկներով՝ 132-112մմ տրամագծով, նախատեսվում է ՈՒՌԲ 2.5Ա տիպի ինքնազնաց հաստոցով հորատել մինչև 55-60մ խորության 3 հորոտանցքեր՝ 175 մետր ընդհանուր ծավալով: Հորատահանուկի նվազագույն ելքը 80%:

Նմուշարկումն իրականացվելու է հորոտանցքերի հորատահանուկից, բացահանքից և բնական մերկացումներից: Անդեզիտների քիմիական կազմը կորոշվի ըստ 4 նմուշների անալիզի, ֆիզիկամեխանիկական հատկանիշները կուսումնասիրվեն 23 նմուշներով, քարաբանական և միներոլոգիական ուսումնասիրությունները կկատարվեն 2 հղկուկների միջոցով:

Նախատեսվում է երևակման սահմաններում մեկ փորձնական բացահանքի անցում 280մ<sup>3</sup> ընդհանուր ծավալով: Այս աշխատանքները կկատարվեն մեխանիկական եղանակով օգտագործելով բուլդոզեր և էքսկավատոր:

Խախտված հողերի լեռնատեխնիկական վերականգնումն իրականացվելու է երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ավարտից հետո: Նախատեսվում է 3 հորատման հրապարակների կառուցում՝ 90խմ ծավալով: Հորատման աշխատանքների իրականացման համար նախատեսվում է 1.5կմ երկարությամբ ճանապարհի վերանորոգում: Աշխատանքները կիրականացվեն մեխանիկական եղանակով՝ 4-րդ կարգի ապարներում,



ընդհանուր ծավալը կկազմի 1000իսմ: Ռեկուլտիվացիոն աշխատանքների համար նախատեսված է 150 հազ. ՀՀ դրամ:

Ագատի անդեզիտների երևակման տարածքում <<Սաս-Դավիթ>> ՍՊԸ-ի կողմից երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում դրսևորվելու են մթնոլորտի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա: Բացահանքում աշխատող ավտոտրանսպորտը և հորատման հաստոցները դառնալու են վնասակար գազերի և փոշու արտանետման աղբյուր: Նախնական հաշվարկների համաձայն բացահանքում վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի երկօքսիդ, մուր) առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով սահմանված սահմանային թույլատրելի խտությունները:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունների մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հատուկ հատկացված տեղում բացօթյա կամ ծածկի տակ պահուստ ,որին տրվում է համապատասխան թեքություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը:
- Օգտագործված հողերի և քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար:
- Հնամաշ մետաղների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնում որպես մետաղական ջարդոն:
- Կենցաղային աղբի տեղափոխում մոտակա աղբահավաք կետեր:
- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում:
- Փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակները, հանքախորշերը, լցակույտերը, մուտքային և դեպի լցակույտեր տանող ավտոճանապարհը և այլն) ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին:
- Կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկվում է հատուկ ծառայության ուժերով:
- Խախտված տարածքների ռեկուլտիվացիա:
- Երկրաբանական ուսումնասիրության համար նախատեսված տարածքում բուսականության դիտարկում՝ ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսական և կենդանական տեսակների բացահայտման նպատակով: Նման բուսատեսակների պոպոույացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանությունն իրականացնել սահմանված կարգով:

<<Սաս-Դավիթ>> ՍՊԸ-ն երկրաբանական ուսումնասիրության ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ օդում, հողում և լեռնատրանսպորտային սարքավորումներում: Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 200 հազ. դրամ:

### **ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ**

Այսպիսով երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Կառնուտ բնակավայրում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակայնության կողմից հարց բարձրացվեց Կառնուտի ջրամբարի պատնեշի անվտանգության վերաբերյալ: Փորձաքննական գործընթացում հաշվի է առնվել և նախագիծը լրամշակվել է: Ներկայացվել է հիմնավորում, որ պատնեշից ուսումնասիրության համար հայցվող տարածքը գտնվում է



ավելի քան 600մ հեռավորության վրա, իսկ աշխատանքների իրականացման ժամանակ հորատապայթեցում չի իրականացվելու, հետևաբար երկրաբանահետախուզական աշխատանքների նման եղանակը չի կարող էական ազդեցություն ունենալ պատնեշի վրա:

### Փորձաքննական պահանջներ

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:

2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտի փաստաթղթերում ամրագրված բնապահպանական միջոցառումների և սոցալ-տնտեսական ծրագրի պահանջներին, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական բոլոր նորմերը:

3. Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում առաջացած շինադրի (կենցաղային ադրի) հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել հողի, ջրի, օդի վերահսկման աշխատանքներ, և արդյունքները ներառել մոնիտորինգի պլաններում:

5. Հաշվի առնելով, որ Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներն իրականացվելու են Կառնուտի ջրամբարի պատնեշից 600մ հեռավորության վրա, պատնեշի անվտանգությունն ապահովելու համար փորձնական հանույթն իրականացնել բացառելով հորատապայթեցման աշխատանքները:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՍԱՍ ԴԱՎԻԹ» ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Շիրակի մարզի Ագատի անդեզիտների երևակման տարածքում օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝



Ձ. Զուռնայան